



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

• ՏԱՐԻ ԹԻՒ 7

ՀԱՐԱՐ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԵԳՂՑԵՍՏՈՒՄԻ ԵՄԻՈՂՆՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԵԳՂՑԵՍՏՈՒՄԻ ԵՄԻՈՂՆՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Պարտ, Օռդու-Պարտ հաստատութիւնն Ղէժ, Թիւ 16

(T. آصادوریان) شرکت مطبعه مطبعه — باب عالی جاده نوسه و ۲۰

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի հաստատութիւնն Թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փամպամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՅԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կաւորեւ լազործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոյն մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|--------|---|--|
| ԲՆԲԱՆ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (| 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (| 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ . |
| | (| 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՏԱՐ | (| 2արշը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեալ երախաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. Վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզզուլուի տունը:



ՐԵԻԵԼՔ

ՕՐՍԱՆ

Թերթ ազգային, գրական եւ բաղադական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գաւառներու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեռքէ վաճառում՝ ամսը փարա: **ՐԵԻԵԼՔ** հրա յարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խրմազգրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԱՅԻՆԱՐԴ ըլլալու հանդամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսութեաներ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անոռեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւ այլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խրմազգրատունը:




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 7

ՇԱՐԱՐ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907



ԵՐՈՒՍԱԼԷՄ

Արդեւ զի մեր բազմաթիւ ընթերցողները՝ որոնք օրը օրին կը կարդան Ամեն.
Ս. Պատրիարք Հօր վերջին կարգադրութեամբ դրկուած հաշտեցմանից պատճառաւ-
կութեան մասին, կը փութանք զիրին կցել ինքնասիւ պատկերը երուսաղեմաց,
գաղափար մը տալու համար աշդ Սուրբ երկրին ընդհանուր դիրքին եւ տեսիլն
վրայոք:

ՏԱՆՏԻԿԱՆՈՋ ՊԵՏՔԸ

Կարգ մը սղայական ու թեթեամիտ մարդիկ, երբ ամուսնանալու որոշում տան, առնելիք աղջկան մօտ պարի և դաշնակի առաւելութիւնը կը փնտռեն, գիրի ու գրչի մարդիկ՝ ուսմունքը, իսկ եփօմիսքներ, ձեւ կար:

Եւ իրօք ընտանիք մը կազմելու համար ո՞վ չի բազմար տիկնոջ մը, որուն ձեռքէն չի խուսափի այն էական աշխատութիւնները որոց մէջէն է՝ն պիտանին և անհրաժեշտն է կարը:

Տան տիկնոջ մը պարտքն է ինքն իր վրայ հոգ տանիլ, պատրաստել իր հագուստները, զանոնք ձեւելով կարել, կոկել ու կարկտել ինչպէս նաեւ իր զաւակաց հանդերձներն նորոգել, վերջապէս ի գլուխ հանել ինքն իրմով այն կարգի օրը օրին պէտքերը՝ որոնց համար ավերով դրամ կը մսխուին, եթէ օտար ձեռքերու յանձնուին անոնք:

Որչափ հաճելի է տեսնել մայր մը որ ամուսինը իր զբաղման՝ իսկ պղտիկներն ալ վարժարան՝ ճամբու դնելէ վերջ, կ'անցնի իր կարին գլուխը և երգի բերան ուրախ գուարթ կը գործէ ան, կարելով կարկտելով իրեննորուն պէտքերը, ձերմակները և բոլոր այն բաները որոց պէտք ունի ընտանիքը ամբողջ:

Բայց կարելի է որ աջ ձեռքը միայն կաքենայ յաղթել այդ ծանրածանր աշխատութեան: Կիները միայն գիտեն թէ ինչ ըսել է կարը որ կարողին կարողութենէն և ոյժէն շատ բան կը պակսեցնէ: Մինչեւ իրիկուն կորաքամակ՝ սեփրին անկիւնը կծկուիլ և ասեղ զարնել, ահա ինչ որ դէմ է առողջապահութիւն:

Բայց մարդիկ կը կարծէք թէ կը քնանան...

Այս օր գրեթէ չիկայ տուն մը ուր մարդ գնած չըլլայ Սինկիէի կարի մեքենան որ աշխարհիս վրայ գտնուած մեքենաներուն է՝ն տոկունը, է՝ն լաւը և է՝ն դիւրամատչելին ըլլալը հարկւրաւոր իրաւունք հաստատած են արդէն:

Ընտանիքի հօր մը պարտականութիւնն է Սինկիէ կարի մեքենայ մը գնել իր տանը, կնոջը և ընտանիքին համար, և ալ նոյն հայրը իր պարտքը կատարած կըլլայ և այսպէսով կինն ալ առանց յոգնութեան կոկիկ կոկիկ կը շարուկէ իր կարերը առանց մօտիւթներու թուցիկ վճարքներուն մատնուելու: Ոմանք անոր սղութեան համար կը քաշուին ու չեն ուզեր մէկ անգամէն 4-5 ոսկի վճարել իրենց ընտանիքին է՝ն էական պէտքին համար: Եւ սակայն Սինկիէի գերահռչակ Տունը այդ պարագան ալ նկատի առնելով, որպէս զի աղքատիկ և միջակ դասակարգի ընտանիքներ չի զրկուին այդ մեքենային հազարաւոր բարիքներէն, մասնավաճառներ յատկացուցած է, այնպէս որ, շաքաթական կամ ամսական շատ պզտիկ վճարումով մը այսօր կարելի է մէկ անգամէն ձեռք ձգել գեղեցիկ գործիք մը՝ որով միայն կարելի է ընտանիք մը կոկիկ ապրուի:

Ո՞ր տունը, ո՞ր տանտիկինը, և ո՞ր ընտանիքը պէտքը չզգար ասեղին և դերձանին, ամէն օր ամէն վայրկեան:

Միջակ դասակարգի տանտիկին մը անշուշտ իր ամուսինէն թանկագին աղամաններ, ոսկիէ զարդեր և մարգարիտ մանեակներ չսպասէր, բայց շաքաթական կամ ամսական պզտիկ վճարումներով նոյն այդ կարգի ընտանիքի տէր մը կրնայ անհուն ուրախացնել իր կինը, նուիրելով անոր տոկուն Սինկիէի մեքենայ մը որ անձնուր գիտակցութիւն ունեցող և խելքը գլուխը էքօնօմիսդ տիկին մը շատ աւելի հաճոյքով և ուրախութեամբ կընդունի, քանի որ անիկայ պիտի ազատի օրն ի բուն կծկուելէ՝ կարկտութի և հանդերձաշինութեան համար:

Այս տողերը երբ կը գրենք, գիտենք թէ ռեփլամի տեղ պիտի առնեն ու ըսեն թէ Սինկիէ ճանչցնելու մտօք գրած է, սակայն ո՞վ չէ ճանչցած այդ տիպար մեքենան, ո՞վ չէ գնած և ո՞վ իր անձնական փորձառութեամբ չէ՝ հաստատած անոր հարկւրաւոր առաւելութիւնները:

Մենք կուզենք որ մեր համայնքին մէջ կոկիկութիւնը և տանտիկնութիւնը տարածուի, և այս մի միայն շնորհիւ Սինկիէի մեքենային:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ԱԼԱՖՐԱՆԿԱ

Մահեր կը պատահին, մահազոհներ կը հը-
րատարակուին, թուելով Ազամ Եւայէն ըս-
կըսեալ մեռնողին սօյը, սօքը, սինսիլէն,
օխտը պորտը, աշխարհիս ներսն ու դուրսը
և չորս անկիւններուն մէջ ունեցած և ունե-
նալիք ազգականներն ու ազգականացն ազ-
գականները, բարեկամներն ու բարեկամաց
բարեկամները: Մահազոհները կը փակցուին
հոս ու հոն, պատերուն վրայ ասդին անդին,
եկեղեցւոյ դռներուն վրայ, մեծ պողոտա-
ներու և հրապարակաց անկիւնները, կամրջին
վրայ: Այսչափով չի լմննար, մահազոհներն
իրը հրաւիրագիր՝ նամակածեւ կը զրկուին
մեռնողին հարուստ ազգականացն ու բարե-
կամներուն: Մահազոհները լրագրաց միջոցա-
ւեւ կը հրատարակուին և խմբագիրք փոխա-
րինութեան մը ակնկալութեամբ՝ երկնային
նանգիս կը մաղթեն մեռնողին, և մխթա-
րութիւն՝ անոր պարագայիցը:

Ծաղկեփունջն ալ ալաֆրանկա է, և
ալաֆրանկայի ծայրայեղ հետամուտք կը բո-
քոտին՝ եթէ մերձաւոր կամ հեռաւոր ազգա-
կանի մը դազաղին վրայ դրուելու համար
աղէկ թէ գէշ ծաղկեփունջ մը չի լրկեն,
մինչ ողորմութիւն ուզող աղքատի մը՝ դու-
ռը երեսին գոցելու չեն խղճար:

Այս տողերը գրելու պահուս՝ Մէփիստոփ-
փէլ քովս գտնուելով, կը յիշեցնէ կարգ մը
մարդիկ ալ, որք թէեւ կըսէ ծանուցման
անսալով ծաղկափունջ չեն զրկեր, բայց միւս
կողմանէ փոխան ծաղկափունջի՝ Հիւանդա-
նոցին ըրած 1-2 ոսկի նուէրնին եթէ լրագ-
րաց մէջ իրենց անուանով ու մականունովը
հրատարակուած չի տեսնեն, քիթերնին կը
կախեն, սիրտերնուն կիջնայ:

Մէփիստոփէլ վերջերս օր մը իր մէկ բա-
քեկամին յուղարկաւորութեանը հանդիսին
ներկայ գտնուելով՝ տեսածները կը պատմէ
այսպէս.

«Որոշեալ ժամուն եկեղեցւոյ մեծ զան-
գալը սկսաւ ղօղանջել, յուղարկաւորները
հետզհետէ կը հասնէին ու կը լեցնէին եկեղե-
ցին, շքեղ մահաբեմի վրայ դրուած էր թաւ-
շապատ դազաղը, որոյ շուրջը հիանալի ճա-

շակաւ շարուած էին ծաղկեփունջերը, որոնց
տրուած դրամով՝ յիսուն աղքատ ընտանիք
ձմեռն առանց ածուխի չեն մնար:

«Եկեղեցին լուսոյ մէջ ողողուած էր,
սգակիր բարեկամները դազաղին երկու կող-
մը ձեռքերնին մէյմէկ մօմ բռնած կարսաւ-
ուէին, և հազած սեւ քօթիւմնին կը ցու-
ցադէին: Հանդէսին կը նախագահէր Սրբա-
զան մը, շուրջն ունենալով՝ 440 վարդապետ
և 1440 քահանայ: Մեռելական աղօթից
ընթերցումն սկսաւ ըստ փափաքանաց հան-
գուցելոյն՝ Եռաձայն: Ուշագրաւ էր «դատ-
եա՛ տէր զայնոսիկ» երգը, զոր քահանայք
եռաձայնի հմուտ չըլլալուն համար միա-
ձայն երգեցին, որ շատ գէշ ազդեցութիւն
ըրաւ եռաձայնի սիրահար յուղարկաւորաց
վրայ, և քիչ մնաց շատերն ալ նուազէին
եթէ բարեկամաց օգնութեամբ դուրս չի նետ-
ուէին:

«Յետ մեռելական աղօթից՝ Նախագահ
Սրբազանը ընտիր դամբանականաւ մը ի վեր
հանեց հանգուցելոյն ունեցած եւ չունեցած
բարեմասնութիւնները, եկեղեցասիրութիւնը,
(տարին երկու անգամ Զատիկի ու Ծնունդի
եկեղեցի երթալը գիտեմ չըսէ՝ Մէփիստոփէլ
պատմութիւնն ընդհատելով), կրթասիրու-
թիւնը, (վրաս գրէ՛ կը մուտայ Մէփիստոփէլ)
աղքատասիրութիւնը, (աղքատները պարապ
տեղը յաշխարհիս վրայ բեռ ըլլալուն, թող
հողը փորեն՝ մէջը մտնան ըսելը բիւր անգամ
լսած եմ, և տասնոց մը իրր ողորմութիւն
աղքատին զլանալը լաւ գիտեմ կըսէ Մէ-
փիստոփէլ, դարձեալ ըրած նկարագրութիւ-
նըն ընդմիջելով), որդեսիրութիւնը, (նայէ՛,
ասոր ըսելիք չիկայ...), և ազգ. բարեգոր-
ծական հաստատութեանց նկատմամբ իւր օ-
րինակելի առատաձեռնութիւնը, (ապոնք միտ-
քէն անգամ անցնելը մեղք կը սեպէր, դուն
ինչ կ'ըսես մարդ Աստուծոյ, քիչ մնաց պի-
տի պօռայի և քարոզը խանգարէի, բայց
համբերեցի, առատաձեռն էր այո՛, միմիայն
իր որկորին համար, իւլիւճերին ու խըլք
ձկան համար փարային թէքին չիֆթին չէր
նայեր...), և ալքօլամոլութեան նկատմամբ
համակարծիք գտնուիլը ողբացեալ Թաւշան-
ձեանին հետ... եւայլն եւայլն. (կռնդկիս
մէջտեղէն պիտի ճաթէի... քեզի բան մ'ը-

սեմ կը հաւատաս, աշխարհիս մէջ եթէ չի սիրած մէկ մարդը կար՝ ան ալ Թաւաշանճեանն էր, որ կ'ըսէր. սրբապղծութիւն գործեց Նոյ Նահապետին տնկած այգիին պտուղին ջուրը անարգելով»:

Մէփիստոփէլ պատմութիւնը լմնցնելէ ետք ծոցէն լրագիր մը հանելով կ'ըսէ.

— Բարեկամս, յուզարկաւորութեան հանդիսին նկարագրութիւնն էր այս, հիմա յուզարկաւոր գտնուող անձանց անունները պիտի կարդամ, մտիկ ըրէ.

— Ինչ ... դեռ կարդալի՞ք կայ, դեռ չի լմնցա՞ւ.

— Յուզարկաւոր գտնուող անձանց անունները, լրագրաց միջոցաւ հրատարակելը ալաֆրանկա չէ՞, պի՞նդ գլուխ, գոչեց Մէփիստոփէլ, բարկութենէն պոչն ասդին անդին շարժելով և աչքերը խոշոր բանալով, դեռ չե՞ս գիտեր:

— Շատ երկա՞ր է.

— Հապա կը հարցունես, մեռնողը պըղտիկ մարդ էր, աղքատ էր որ դագաղին ետեւէն չորս ու կէս մարդ երթար ... ատշուէն ալ տէրտէր մը:

— Ժամանակ չունիմ այսօր մտիկ ընելու, վաղուան թող մնայ, գործ ունիմ:

— Գործը տեղէն չի փախչիր:

— Դրամ պիտի գանձեմ այսօր:

— Երանի քեզի:

— Վաղուան ձգենք նէ չըլլա՞ր, Մէփիստոփէլ:

— Զըլլար ըսինք ա՛, վաղն ալ քեզի ուրիշ բաներ ունիմ պատմելիք, մտիկ ըրէ՛.

— Լաւ.

«Ներկայից մէջ ...

— Ներկաները որո՞նք են.

— Յուզարկաւորներուն համար կ'ըսէ.

«Ներկայից մէջ կը տեսնուէին Տեարք Եղամ, Գեղամ, Տիտամ, Բարթամ, Արամ, Աբրահամ կամ Աբրամ և ըստ եփրայական հնչման՝ Ավրամ.

— Այդ բացատրութեան հիմա ի՞նչ տեղը կայ ... ցը՛ք, ցը՛ք, ցը՛ք, չօք չէյ:

— Քուկին խելքիդ հասնելիք բանը չէ՛ աս, մտիկ ըրէ՛.

— Մտիկ կընեմ կոր, շարունակէ՛.

«Տեարք Մասմա, Մասմանա, Սանա, Յօ-

սավիա, Սամաա, Եղիսամա, Բաղիադա, Ասայիա, Սաբանիա, Դիմա, Դումա, (պէտք չէ շփոթել Դուման՝ պէրպէր Թումայի հետ, որ վարպետ ճէրահ մ'էր, և որ շատոնց մեռած է, Տէրը լուսաւորէ հոգին):

— Մէփիստոփէլ, այդ բացատրութիւններն ալաֆրանկայի կա՞րգ անցած են ...

— Գրեթէ նոր անցած են և դեռ չե՞ս գիտեր՝ ինչե՛ր ինչե՛ր պիտի անցնին. (ընթերցումը շարունակելով).

Տեարք Քոտուա, Հիկտոն, Տիգտոն, Դիգդոն, Տիտոն, Սաբոն, Հոսամ Սոսամ ...

— Ծանրմ ատոնք ի՞նչ անուններ են, ո՞վ են այդ մարդիկը ...

— Մտիկ ըրէ՛.

«Ներկայից մէջ իբր սգակիր՝ կառքերով՝ քառաձի մեռելակառքին կը հետուէին Ազնուաշուք Տեարք՝ Մարայիա, Երեմիա, Անանիա, Ամարիա, Մալուքէ, Կանաթօնէ ...

— Ծանրմ ատոնք ի՞նչ անուններ են.

— Անուն չե՞ն, դժուր գլուխ, մականուն են, պէտք է գիտնալ որ ալաֆրանկայի մէջ անունը վերցուած է, մականունով պէտք է որոշել անձերը և ճանաչել.

— Դժուար բան, ի՞նչ է նէ.

— Մտիկ ըրէ՛.

— Դեռ շատ կա՞յ, կաղաչեմ նշան դիր հոգ.

— Ծօ՛ յիմա՛ր, քեզի չըսի՞ որ մեռնողը մեծ մարդ էր, հարուստ էր, ի հարկէ յուզարկաւոր շատ կ'ըլլայ, մտիկ ըրէ՛, հետիոտն մեռելակառքին երկու քովէն կերթային արտասուս յաչս, սուգ և թախիծ ի սիրտ, Տեարք Յնամեան, Դիսանեան, Ղաբտեան, Մաթանեան ...

— Հոգիդ սիրես, Մէփիստոփէլ կանգ առ հոգ քիչ մը, (Ժամացոյցը նայելով) Օ՛ ... Ժամը 4ը քառորդ կանցնի և ես դեռ հոս եմ, թող զիս երթամ, կը խոստանամ իրիկունը կանուխ վերադառնալ, ճաշը միասին կընենք, սուրճերնիս կը խմենք, սիկառնիս կը վառենք, դուն կը կարդաս՝ ես մտիկ կ'ընեմ:

— Շատ կաճապարես, կեցի՛ր սա ալ կարդամ. մեռելակառքին ետեւէն իբր սգաւոր ոտքով կերթային՝ Տեարք Սալուեան, Քիզկեան, Երեմեան, Զիքեան, այս վերջինը

չատ զգացուած կը թուէր, տեսնելով դա-
զաղակիր կառքին վրայ խոշոր խխունջ մը,
որ գոգցես իբր յուզարկաւոր իր վերջին յար-
գը յայտնելու համար հանգուցելոյն՝ կերթար
գերեզմանատուն:

— Լինցա՛ւ:

— Դեռ երկու սինակ բան կայ, սպասէ՛
լինցունեմ:

— Կարելի չէ, մնաք բարով:

— Միասին դուրս ելնենք:

— Ելնենք:

Ճամբան երկուքնին դացած ատեննին՝
Մէփիստոփէլ:

— Էյ ինչ կ'ըսես սա ալաֆրանկային:

— Շիտակը խօսք չիկայ ... մասնաւոր
հրաւիրագիր չընդունողը չի յօժարիր եղեր
հա՞ ... իր մերձաւոր ազգականին անգամ
դազաղին իբր յուզարկաւոր հետեւելու,
մարդիկ Աստուծոյ, կոչո՛ւնք է այս, հարս-
նի՛ք թէ կոտո՛ւնք, որ մասնաւոր հրաւերի
կապասէք, ի՛նչ ալաֆրանկա է այս, ի՛նչ
խայտառակութիւն է:

— Այո՛, չի յօժարիր մինչեւ մասնաւոր
հրաւեր չըլլայ, հակառակ մահազդերուն ներ-
քեւ գրուած, «ներկայս իբր հրաւեր նկատել»
խօսքին, դեռ ինչե՛ր, ի՛նչ բաներ կան ալա-
ֆրանկա, դուռ մինակ աս գիտես, իրիկու-
նը յուզարկաւորաց անունները կարդալ լմըն-
ցունելէն ետք, քեզ պատմում:

Գ. Փ.

Երկու բարեկամներ Բարիզի Էյֆելեան
աշտարակին շրջակայքը պտըտած ատեննին
յանկարծ մին ընկերը կեցնելով՝

— Նայէ՛, նայէ՛, կ'ըսէ, աշտարակին է՛ն
վերի ցողին վրայ ճանճ մըն է կեցեր ... կը
տեսնա՞ս կոր ...

Ընկերը՝ որ սրամիտ և պատրաստաբան
մէկն էր, կը պատասխանէ առանց վարա-
նումի,

— Ինչէ՛ս չէ, տեսայ հոն թառած ճանճը,
որուն մէկ աչքն ալ կոյր է ...:

։ ։ ։ ։ ։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ

(ԱՐՁԱԳԱՆԳ)

ՄԻՕՋՈՒԽՍԷ

Pardón, mon ami չ'ես գրած շիսակ
Դուն իմ անունըս, որպէս թէ կասակ ...
Ելեր կը հեքես կարծիքներս յրսակ,
houffեով պանալ՝ օգուս ու վասակ:

Ջուր տեղ կը փրցուես, ... զերդ մի փրցադաս
Հագա՛ծ ես արդեօք ... ակեղ հաստ արբաս...
Վե՛ր վե՛ր կը ցակես ... երբ ցուրտ փրչէ ...
Սարսուացնելով ... հագուստդ փուչէ ...:

Նորէն կը մըսիս քանգի չ'ունիս կես,
Սրտիկդ է բացուեր անդունդ ու կրկես,
Լաւ չ'ըլլա՛ր տղաւս, որ տուն տեղ ըլլաւ,
Անկողնիդ մէջն ալ պարես փառի՛լ, քան ...:

— Թէ կարգը ելուն իմաստ ի՞նչ է, —
ձոխութիւն, դրամ նոյն իսկ ոչ ի՞նչ է,
Երբ չ'ունիս տունիդ մէջը ամուսին
Որ վեր կը պահէ վարկը նամուսին ...:

Բաղդախաղ մըն է այս աշխարհս արդէն,
Չ'են զանազաներ ետեր մարդէն,
Եթէ լեցունկէկ ունի մի բոքսմեն
Կ'ըլլայ խրնկարկուն քանարին հիմէն ...:

Անկեց ետքն է որ կը դառնայ դրժոխք,
Տունը ուխտերին երբ ըլլան դրժոխք,
Վեցնիսի փուրը նոյն իսկ փրմունին,
Երբոր չ'են յարգեր այդ ուխտերին հիմն:

Դրամօժիտով ալ մ'ամուսնանար,
Երբոր չ'ես կարող յաւէս անհամար
Քաբոխներուն միտ տկալ, փու կեսին,
Երբեք մի մօտի տուրջը կրկեսին ...:

Սակայն վերջին խօսք երբ աներ պապան
Հրածեցէս է տուած ... միտ բողով իսպառ,
Արդ, կալուած, ոսկի գրքի երկու հաս,
Մեկուն քեկնածուն եղի sans commande:

Իսկ միւսն ալ ինծի լուր տու անխափան,
Վազն ի վազ երթամ տուով ի մի բան:
Ձեռք խրնկարկու այդ չ'ընաղ կուսին՝
Որ ալ չ'օրօրուիմ այս խոհերով սին:

ԱՐՇԱԿ Գ. ԻՍՊԷԶԵՐԱՆ

ՊԱՉԻԿԵՆ ԱՌԱՋ

[ԶԱՒԻՇՏ ՄԵԿ ԱՐԱՐ]

Տեա՛ր Սօսմակէշեան՝ վաճառականի մը
 քով 15 ոսկի ամսականով պաշտօնեայ, վեց
 ամսէ ի վեր ամուսնացած է: Իսկ Տիկինը
 Նուարդ՝ բարոյական եւ Ֆիզիքական ամէն
 ձիրքերով օժտեալ կի՛ն մըն է:

Իրիկուն է, Տիկին Նուարդ միճակ իր սենեակը:
 (Նեղսրտութեամբ)

Ահաւասիկ ժամը չորսն է և դեռ չեկաւ
 անօրէնը, արդէն այս առտու տարտամ վի-
 ճակ մը ունէր ... Լեզուին տակ ըսելիք մը
 կար, կակազեց կակազեց և չկրցաւ յաջողիլ:
 Երէկ իրիկուն ալ ձընարխճեան Սաթնիկին
 հոս եղած ատեն, ի՞նչ եռանդով կը խօսէր
 կոր անոր հետ ... հապա ան՝ ruse նայուածք-
 ները, անոր չոպլած complimentները ... հա՛-
 աղէկ միտքս ինկաւ ... գիշերը քունին մէջ
 թեւը վիզս նետած ատեն՝ Սաթէն Սաթէն
 մըթմըթաց ... Թէպետեւ կէս քուն կէս ար-
 թուն էի, սակայն աղէկ լսեցի այս անիծեալ
 անունը ... (բարկութեամբ) չէ՛ չեմ կրնար
 հանդուրժել ասոր ... պէտք է նախանձիմ
 անկէ ... այն անպիտանէն ... նախանձիւ
 եմ ... (կը խօսի, պահ մը լուռ կը մնայ եւ
 յետոյ ականջ դնելով) պարտէզին դրան ձայ-
 նըն է, այո՛ եկաւ ան է, աղէկ կը ճանչնամ
 իր սոյլը ... իր գործը պիտի կարգադրեմ,
 աղէկ պիտի չինեմ:

ՊԱՐՈՆ ՍՕՌՄԱԿԷՉ. — (վարե՛ն) Նուարդ
 եկուր դուռը բաց ...

ՏԻԿ. ՆՈՒԱՐԴ. — Չէ՛, պիտի չբանամ:

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Բա՛ց կ'ըսեմ կոր:

ՏԻԿ. ՆՈՒԱՐԴ. — (Ծաղրականօրէն) Ին-
 չո՛ւ եկար, դեռ կանուխ է ճանրմ, ո՛ւր էիր
 նէ հոն կորսուէ նորէն, քեզի կը սպասեն կոր:

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Հայտէ պօշպօղա-
 դութիւն չուզեր, եկուր դուռը բաց, չէնէ
 պիտի կորեմ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Faites ce qui vous
 plaira, կարծես թէ հո՛գ կ'ընեմ, քսակիդ
 հետ տեսնուեցա՛ր:

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Լա՛ւ, չե՛ս բանար,
 անանկ է նէ քեզի հետ կը տեսնուիմ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Այո՛ն այո և ոչն ոչ,
 չբանամ պիտի: (Պրճ. Սօսմակէշ դուռը կը
 կոսրէ): A qu'est ce que ça peut me faire,
 անանկ մըն ալ կը կոտրես կոր որ, իբրեւ թէ
 զանիկայ վերանորոգելու հոգը չստանձնէիր:
 ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — (Ներս մտնելով)
 Ի՛նչ ունիս այս իրիկուն, հէ՛, ի՛նչ կը նշանակէ
 դուռը չբանալ, չս'ւտ ըսէ, ի՛նչ կ'ուզես,
 սընըրնե՛րդ մէջտեղ ելաւ նորէն, բանե՛ր մը
 հասկցնել կ'ուզէիր կոր, չըսե՛ս ...

ՏԻԿ. ՆՈՒԱՐԴ. — Ես մէկ անգամ աչ-
 խարհ եկած եմ, հետեւաբար մէկ անգամ կ'ը-
 սեմ մէկ բանը:

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Եկած տեղդ եր-
 թայիր հէ՛մէն տէ ...

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Գիտե՛ս, բաւական
 ատենէ զիս կը նեղես, կը զրգռես կոր, ե-
 րեսի վրայ կը ձգեմ քեզ, մամայիս տունը
 կը դառնամ ...

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Մայրիկդ և դուռ-
 դոյդ մը կ'ըլլաք, քանի որ կ'ուզե՛ս, բըռ-
 թընեղդ ժողվէ հիմակուընէ ճամբայ ելիր-
 վըրթկած մօրդ գնայ, կ'ուզես նէ ալ մի՛ն-
 չեւ ձէհէննէմ ճամբայ ունիս ...

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Մամայէս ի՛նչ կ'ու-
 ղես, կի՛նը քեզի ի՛նչ բրած ունի, վրթկածը
 մոթկածը մէկ կ'ընես կոր, սուրբի պէս կը-
 նիկ է ...

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Թուռք ըսէ աւելի
 աղէկ է, ի՛նչ բրած ունի մի՛, քեզի աշխարհ-
 բերելով՝ վրաս երեքլէթմիշ բրաւ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Էշերը երեքլէթմիշ
 կ'ընեն, և եթէ անանկ է՝ թող զի՛ս չառնէիր,
 (չարամտութեամբ) քեզի կ'ընի՛կ կը պակսէր ...

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Կերած խալթը նայէ,
 չկարգուած ֆընտըխճիութիւն ըրիր, պոչ
 խաղցուցիր, ետեւէս առջեւէս ինկար, չը-
 րածդ չմնաց քի փարաս, ունեցածս, չունե-
 ցածս ձեռքդ տամ, ես ալ կընիկ տէլիսի,
 խանմիշ եղայ, հիմա՛կ «թող զիս չառնէիր»
 կ'ըսես հէ՛ ...

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Հապա ի՛նչ գիտնամ...

ՊՐՆ. ՍՕՌՄԱԿԷՉ. — Ի՛նչ գիտնամ, մի՛նչ
 գիտնամ չեմ գիտեր, պարապ խօսքերով ժա-
 մանակ չանցընենք, քուն ունիմ ... պիտի
 պառկիմ ... բապուճներս բեր տէ սա ոտքի
 ամաններս ալ քաշէ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Դիմացինդ Մարիամը
չէ՛, խելքդ գլուխդ ժողովէ՛:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Ես էնայի պողոտն
դըսը չեմ քա՛, պապանծէ՛. կակադ գոցէ
տէ ձայնդ քաշէ, գիտցած ըլլաւ կը ծեծեմ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Վա՛տ արարած, կը
յուսամ քեզմէ ...

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Դեռ կը խօսե՛ս,
անկի՛րթ: (Կիցը կը ծեծէ):

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — (Լալով) Հիմակ ինք-
զինքս երթամ ծովը պիտի նետեմ ...

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — (Ծաղրելով) Աս
տտեն բաւական պաղ կ'ընէ ջուրը Նուարդ...

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — (Միտ լալէն մոմաւ-
լով) Մե՛ղք ինծի, մե՛ղք, անխիղճ. եթէ
տաանկ շարունակես, դեռ երիտասարդ՝ եր-
թամ հողը պիտի գրկեմ, (ցած) քեզ գրկելու
տեղ, թերեւս ես ալ կը հանգչիմ դուն ալ:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Լռէ՛, տաանկ բա-
ներ մ'ըսեր:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Հողդ է հէ՛ ...

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Տէր Աստուած...

(Պահ մը վերջ, երբ դեռ Տիկիցն Նուարդ
բազմոցին վրայ նստած կուլար, Պրն. Սո-
մակէշեան անոր մօտեցաւ):

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Հայտէ Նուարդ մի՛
լար. տղայութիւն չուզեր, ելի՛ր (մագեր կը
շոյէ) գիտես որ կը յուզուիմ՝ անոր համար
կուլաւ, այնպէս չէ՛:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Օ՛... օ՛... ֆ, ձգէ...
դիս...

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Անուշիկ Նուարդս,
մի՛ լար ըսի նէ մի՛ լար, կը բաւէ ալ, փո-
թորիկ մըն էր ելաւ անցաւ. էրիկ կնկան մէջ
միշտ կը պատահի ասանկ բաներ ... սիրտս
դէշ կ'ըլլայ կոր ... մի՛, մի լար:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. (Քիչ մը սիւս առնելով)
Ինչպէս չիլամ, զիս քիչ ատենէն պիտի լքես.
արդէն հիմակուրէն յայտնի եղաւ, որովհե-
տեւ զիս կը ծեծես կոր և ... (ոտի կ'ելլէ,
ամուսնույն ձեռքերէն կը բռնէ եւ նայուածքն
անոր աչիւրուն մէջ կեդրոնացրելով) և ...
բան մը պիտի հարցընեմ, չիտակը պիտի պա-
տասխանես:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Հարկա՛ւ, ինչո՛ւ չէ՛.

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Զիս կը սիրե՛ս ...

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Կը հարցընե՛ս խուշս.

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Ինձմէ զատ ուրիշ մէ-
կը կը սիրե՛ս, ուրիշ մէկը ունի՛ս.

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Կը տարակուսի՛ս,
սիրունիկս, քեզմէ զատ ո՞վ պիտի ունենամ,
դուն ինծի քսան հատ կ'արժես:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Կարելի է ... մինչեւ
ցմահ զիս պիտի սիրե՛ս:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Մինչեւ որ պաղիմ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Ըսել է ... պիտի
պաղի՛ս ինձմէ:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Պաղիմ ըսելով
մարմինիս համար կ'ըսեմ, այսինքն՝ մինչեւ
որ մեռնիմ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Հիմակ ինչո՛ւ մեռ-
նելու խօսք կ'ընես, դեռ երկուքս երիտա-
սարդ ենք, կեանքը պիտի ըմբոյխնենք:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Լաւ. բոլոր այս
եղած անցածները մոռցար անանկ չէ՛:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Այո՛, սիրելիս, նե-
րեցի անգամ, ուրիշ ատեն զգուշացիր:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Հրեշտակս:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Սրտիս քսան և վե-
ցերորդ հատորը, (սփանալով) Ժամանակը
ուշ է. արդէն դուն ալ քուն ունէիր, ա՛լ
երթանք պաճիկ ընենք:

ՊՐՆ. ՍՈՌՄԱԿԷՉ. — Մինիսիկս, պաչիկ
մը տուր որ ընենք պաճիկ:

ՏԿՆ. ՆՈՒԱՐԴ. — Ուզածդ այդ ըլլայ,
առ, քուկդ եմ: (Պառկիլ կ'երթան):

ՎԱՀՐԱՄ ՍԸՎԱՅՍԱՆ

Ստացանք Զարէն էֆ. Թորոսեանի հեղի-
նակած պատկերազարդ բնագրի բուսաբանու-
թեան անուն նախակրթութեան համար պատ-
րաստուած դասագիրքը՝ Ա. և Բ. տարիներու
յատուկ:

Դիրքը դիւրին մեթոտով կը սովորեցնէ
համբաւեմ, չորս գործողութիւնն ու տասնոր-
դական և հասարակ կոտորակ ու երկրաչափա-
կան ծանօթութիւններ:

Կը պարունակէ նաեւ 54 նպատակայար-
մար պատկերներ ու ձեւեր, 2000ի չափ մը-
տաւոր ու գրաւոր վարժութիւններ և 200է
աւելի առեւտրական խնդիրներ:

Դիւրամատչելի գին՝ 4 1/2 դրուշ:

Հասցէ՝ Զարեհ Թորոսեան, գրաւաճառ,
Կ. Պոլիս, Պահչէ-գարու Բասիմ փաշա խան:
Գաւառներէն ուղղակի այս հասցէին դիմող-
ները օրինակ մը նմոյշ կատանան:

ՖԱՆԹԱԶԻՆԻ ՏՈՂԵՐ

ՄԵՐ ԹԵՈԴԻԿԻՆ

I

Թեոդիկս աղուոր, առջի շաբաթըսն գրած անեծեղ
 Է՛հ, պրզսիկ գրուխ, սա հեռուութիւնն անկէ հասնեց գէթ՝
 Ո՛ր «ՏԱՐԵՑՈՅՑ» ըդ ժողովրդական ինն ՀԱՐԻԻՐ ՈՒԹԻՆ
 Դէհ, պի՛ս՝ չը հոսի, Պարսամ, Տօմիսօ եւ կամ Յարութիւն:
 Իրապես սիրուն գրուածքներ կարճուկ՝ քայց խիստ շահեկան
 Կը լեցնեն զայն, չե՛, որոնք կը բերեն փառք ու դահեկան:
 Լուր սակայն ինձ դու, թէպէտ չեմ տեսեր գերփոր, շիկահեր.
 Ամենէն առաջ պոռոտս ռէֆլաւի ականջ մի՛ կախեր,
 Պարսֆով մի՛ ծախեր, գրաւիաճառի մըներ հէվալէ
 Ճընճող՝ ո՛վ, ինչ ոչինչ կը ձրգեն ետք՝ քացի . . . հեռայն:
 Ինծի աչ գիրք մը չը խորհե՛ս ըսող ամեն անօթին
 Նըսէ՛ր կ'ուզէ, դուն ցուցուր միւս կողմը մարմին-անօթին .
 Ճըղճիմ գրուածքի, սակը ցեխ անբողջ՝ վրասն կաւ անագ՝
 Եթէ չը հանես ձայն մը՝ տերն անոր մընայ աւանակ :
 Ամեն մարդ հիմա կըսպասէ տեղով լռիւն առ օրիդ
 Ներսէսեան տպով ի յոյս ածուելուն յոյս-խիւնդ հասորիդ :

II

Տարեցո՛յցն է ԹԵՈԴԻԿԻՆ քաղմաշխաՍ
 Ամիսէ մը յոյս կը տեսնէ ան ահԱ,
 Բոզը հանդոյն՝ ՏԱՐԵՑՈՅՑն աչ ձեռքը մեՐ.
 Երկը անբողջ մէկ ծայրէն միւս գրեթէ՝
 Յընցող, յուզող, խընդացընող անուռոյՑ .
 Որն օգտակար, որն հաճելի գրեայ, Ո՛ր
 Յարատեւ ջանքն ըրեր է զայն շախիւղաՑ
 Յընծացե՛ք դուք, որ վայրէք զայն, հոգեցունՑ

ԽԸՅ...Ա՛Խ...ԲԱՌԹԻ

— Խըյ... ա՛խ բառթի է ըսին մարդուն, ամա՛ն փախցնելիք բան չէ:

Ու խեղճ մահկանացուն՝ այսինքն օրիորդին հայրը, ծովը ինկած մարդու մը նետուած քառուչուէ սիմիթին պէս, յարեցաւ փարեցաւ և օր մըն ալ հովանոցը թեւին տակ՝ հարցափորձի ելաւ, ինչպէս սովոր են ընել ծնողք ի խնդիր ամուսնութեան:

Թէրզի է կ'ըսէին, թէրզի ալ չէ՝ դերձակ, որմէկն ալ դերձակի վաճառական, իբր թէ՛ տղան դերձակներ ծախսեր օն gros, վերջապէս անանկ ըրին որ Կ. Պոլսոյ և չրջակայնէրուն մէջ երկու ոտքով պտտող բոլոր շնչաւոր և բանաւոր էակները, Ադամի պէս տուրեւով մը պիտի ծածկուէին եթէ ... այս խըյ... ախ բառթիին ներկայացուցիչը՝ դերձակը չըլլար:

Ալ ի՞նչ կուգէր խեղճ հայրը, աղջիկը պիտի կարգէր և անանկ մէկու մը՝ որ ... խըյ... ախ բառթի էր:

Առաքել աղա՝ նիւթին հերոսը, ինչպէս ըսինք, օր մ'ալ հրապարակ ելաւ այդ խըյ... ախ բառթիին վրայ տեղեկութիւն քաղելու համար, և չիտակ գնաց գտաւ մէկը որ ասանկ մուհապէք քելլալիութեան մէջ եթէ ոչ մեջայ s'օն, գէթ՝ պօն սեռ վիս մը ունէր:

— Բեզի մուհիմ մէսէլէի մը վրայօք հարցունելիքներ ունիմ ըսաւ անոր, կրնա՞ս քիչ մը հետս գալ տէ խախլէ մը խմել...

— Ինչու չէ՛ աղաս, գէնահաթնիս ինչ է ... հասկցայ, խերով է իշալա՛հ, մարդս գէնահաթին մէջը աղէկ անուէն հանէ եօխսա, միւշտէրին ոտքովը կուգայ կը գտնայ ...

— Նէ իսէ, սրտեղը տեղ մը նստինք տէ երկու չիֆթ խորաթուխնք ըսելով երկուքը մէկ սրճարան մը կը քաշուին ու հոգ կսկսին խօսակցիլ:

— Նայէ քեզի բան մը ըսեմ, խօսք կ'առնէ Առաքել աղան սիկառը պլորելով, աս ախսուածան նէ՛ մալիֆաթուռայի կըլմանի նէ ալ նալպուրիյէի, ըսելս պօշ է եւ՝ ...

նէ իսէ, հիմա ինչ քի հարցունելու ըլլամ նէ սաղլամ ճուղապ պիտի տաս, ես ալ քու խաթրդ խօշ կընեմ էվէլ էվէլօք ...

— Մաս վկայ քի գիտցածս պիտի զուրցեմ, զաթը իմ ծառքովս եղածները իշտէ օռթան են, էքիզներու պէս տարիներ կասնի կէնէ իրարմէ չեն զատուիր, իրար կը հոտուրտան, դուն թապլա թէսլիմ եզիր ինծի, դուն կը վաստըկիս Առաքել աղա, ես քու հացդ շատ եմ կերեր ...

— Հիմա պօշ լաֆերը ձգէ տէ հարցունելիքներուս ճուղապ տուր:

— Գլխուս վրայ, գիտցածս պիտի ըսեմ...

— Հա՛, սա գիտե՞ս, եախօտ կը ճաշնա՛ս, միւսիւ Գուլախեան մը կայ եղէր, պաշ թիւճճար, թէրզիի գործ կընէ եղի՞ր տէ ...

— Հասկցայ ամա Առաքել աղա, ան ծանրը լօխմա է ...

— Ծանրը հաֆիֆը չիյտեմ, ատ հէրիֆը մեր Բառանձէմը կուգէ կոր, երկու հարուրով տուն փեսայ ... Ի՞նչ կ'ըսես, ի՞նչ է քեզեար ունիս ...

— Ըլլալիք բան չէ, երկու հարուր ոսկի՛ ... ան մենծ թիւճճարը ...

— Հա՛, իշտէ ատ մենծ թիւճճար ըսածնիդ, երկու հարուր կուգէ կոր ...

— Սա միւսիւ Գուլախեանը՝ ...

— Հա՛ ճանըմ, ի՞նչ չաշմիշ կըլլաս կոր...

— Սա ուր է թէրզիի վաճառականութիւն կընէ նէ ...

— Էյլէնմի՛շ կըլլաս կոր ... հա՛ իշտէ ըսինք ...

— Զօգ չէ՛յ ... ատ անղը սըխալութիւն մը ըլլալու է ...

— Նասըլ սըխալութիւն, քանի օր է տուռերնիս քէօբիւ դարցաւ, իլլէ ճուղապ կուգեն կոր ... ես ալ մտմտամ ըսի, անոր համար քեզի կը հարցունեմ կոր ...

— Էյ չօգ չէ՛յ քի չօգ չէ՛յ ... միւսիւ Գուլախեանին բիլիճի պէս աղջիկ հէմ ալ վեց հարուր ալ ոսկի տուող եղա՛ւ տէ՛ սաղէն օօլը չի դարձաւ ... ե՛ս գիտեմ աղէկը ...

— Բեզի ո՞վ ըսաւ քի մերինը կերէզէ
թափուղի է տէյի, ի՞նչ ունի Փառանձէմս...
տեսած ես ...

— Չէ ամա՛ ...

— Հիմա դուն ինծի ըսէ քի ինսո՞ր տը-
ղայ է տէյի, ինծի ան պէտք է ...

— Աղուորութիւնը խալէմի չի գար, հի՛չ
մի հի՛չ ...

— Ծո՛, սանքի սոսկո՞ւմ չիրքին է ...

— Չէ ճանրմ, սանքի տէյիմէ մէթով չեմ
կրնար թարիֆ ըներ քի ըսեմ ... հա պատ-
կեր տեսեր ես՝ հա ան, կլոխը շարխա մը
գնէ, ֆիստան մը հագնի՞ նէ, դուն պիլէ
պըլըխ պուռմի՜ կընես ետեւն ի վեր ...

— Է՛յ ... ատ կընիկը թող մտմտայ,
գործը՛, գործը նայինք ... կըսէ Առաքել
աղան սիկառ մ'ալ պլորելով, հատ մըն ալ
դէմինին տալով։

— Թամամ տասուերկու իչճի ունի ծառ-
քին տակը քի, գիշերները պիլէ կը բանին,
խանութը օր ըսես, առը խօվանի, մախասին
ույարը չիգայ, խաթ մը լաթ չինէ նէ պա-
տանքի պէս վրադ կը փակի ...

— Լա թէմսիլ կ'ըսեն ծո՛, ատ ի՞նչ լա-
խըռաը է, չօդ չէ՛յ ... է՛յ ... ետքը։

— Մէկ մարիկ մը իլէն քուրիկ մը ունի,
անոնք ալ իրենց հալին մարդիք են, ֆախաթ
էթուաֆ թառաֆը շատ են, տալլը պուտախը։

— Ատ տեղը աւրեցիր գործը ... ատ-
տար սիւրին ա՛ս կը նայի ...

— Չէ ճանրմ, բիւթիւնին հետ ալ սրդո-
ղած է, ճանճ մը պիլէ տուններնուն չախչա-
խին վրայ չի գար տէ թառիթ, կ'ըսէ միջ-
նորդը կռահելով թէ այս տեսակ գործերու
մէջ շատ էթուաֆ թառաֆը լաւ ազդեցու-
թիւն չընէր։

— Էյ սանքի ի՞նչ կըսես, կը տրուի՞ բան
է ...

— Ճանրմ Առաքել աղա, կը տրուին ալ
խօսք է՛, ֆախաթ գիտե՛ս ես, ինծի ալ չի
մոռնաս, չիւնքիւ չըմէնտըֆէոֆն գարնելուն
պէս բան մը եզաւ քեզի, հի՛չ որ չէ նէ ...

— Հասկըցանք ճանրմ, ետքէն կը տես-
նուինք ըսելով կը հեռանայ մօտէն ուրիշի մը
հարցնելու համար, և չիտակ կերթայ կը
գտնէ մէկը որ, հրապարակի գործերուն տեղ-
եակ էր։

— Բարի լուս բարեկամ, աֆ կընես կա-
նուխ ինկայ ամա՛, զարար չունի աճին կը
հանենք ...

— Օ՛ ... հրամայեցէք, բարով եկար հա-
զար բարի, ի՞նչ կայ խեր է ինչպիլա՛ն ...

— Ճանրմ, մեր Բառանձեմը ուզող եղաւ
տէ, աճապ տղան կը ճանչնա՛ս տէյի մէյ մը
հարցափորձի եկայ ...

— Դուն ազէկ գիտես քի ես բիւթիւն
էսնաֆը էլէմի՜ եմ ըրեր, անո՞նք ...

— Ֆուլախեան ...

— Էյլէնճէյի մելլար Առաքել աղա ...
ան մենձ վաճառական դերձակը ...

— Պէ պապամ աս բիւթիւն ասանկ կ'ը-
սեն կոր, ի՞նչ է, պանքայի տէ՛ր է ...

— Ի՞նչ կ'ըսես կոր բարեկամ ... ատ
տղան աղջիկդ կուզէ կոր տէ եկեր կը հար-
ցունես կոր ...

— Ծո՛ ախպար անխտար կընէք կոր քի
Բառանձեմին տեղը իս առ պիտի ըսեմ հէ-
րիֆին ...

— Դուն ալ առ՝ պապատ ալ թող առնէ,
կընիկդ ալ թող ...

— Է՛յ ... հաթկցանք շնորհակալ եմ,
կըսէ ու կը մեկնի՝ երրորդի մ'ալ կարծիքը
առնելու համար, ու ճամբան հանդիպած
մէկուն,

— Բարի երթաս ախպար, քեզի մէկը պի-
տի հարցունեմ, սա միւսիւ Ֆուլախեան մը կայ
եղէր, նասը՛լ տղայ է ...

— Բուանդի, բուանդի՛ ...

Ուրիշ բարեկամի կը հանդիպի,

— Ֆուլախեան նասը՛լ տըր, գու-
զում պիլտիլինի սէօյլէ ...

— Թէք թաշ եազո՞ւթ ... հի՛չ պագմա
ալ ...

Ուրիշ ծանօթի մը հարցնելուն,

— Ֆուլախեան թէրզի մը կայ եղեր, ա-
ճապ անոր վրայօք բան մը գիտե՛ս ...

— Զիւմրիւթ, դիւմրիւթ, հէմ լէքէօիգ...

Առաքել՝ աղա տեսնելով որ մէկ կողմէն
խուլումճիի խանութ կը բացուի կոր մտքին
մէջ, շնորհիւ Ֆուլախեանի գովեստներուն,
ուստի տուն երթալով կնոջը հետ կը խոր-
հըրդակցի, որոշումը կուտան, և մօտ օրէն
նշանտուքը ըլլալով ամիսէ մըն ալ երկու
հարիւր ոսկիները կը համրէ և հարսնիքը կա-
տարուելով տղան քուք ալա շիֆ տուն փե-
սայ կուգայ աներոջը տունը։

Հարսնիքէն երկու շաբաթ վերջն է գըր-
ուածքս :

Փեսան Տիար Ֆուլսիսեան շաբաթ մը ամ-
բողջ առտուն կանուխ և երեկոյին ալ ուշ
ատեն գործին երթալ գալէ վերջ՝ չորս օր է
որ գիշերնոցը կոնակէն չէ հանած և տանը
պուճախը կծկուած է :

Այս պարագան աչքէ չը վրիպեցնող անէր
պապան՝ Առաքել աղա, առաւօտուն կինը մօ-
տը կանչելով,

— Նառգիկ ... փեսանիս աս օր ալ
տունը պիտի մնայ ...

— Զիտեմ, հիւանդ է տէյի գիտեմ կոր,
Բառանձեմս ալ անանկ կըսէ կոր ...

— Քա նասը՛լ հիւանդ կըլլայ քի օրը
չորս ժուռ հաց կուտէ կոր նէ ...

— Զանէր սընըրի հիւանտութիւն է քի
իշտահին զարար չի տար կոր ...

— Աղեկ եա, աս պաշ թէրդի է նէ խա-
նութը ո՛վ կը դառցունէ կոր ...

— Հէլպէթ իքիւնճի իւշիւնճիւ եառտախ-
ներ ալ ունի, ինք ծունկը վեր առնելու տէ
ասեղ ծեծելու չէ՛ր եա ...

— Խեղքս չի հասնիր կոր կընիկ, մէկ եր-
կու անգամ մաղազան գտնուեցայ, հոն կէօզ-
լիւկիւ մէկը կար, բիւթիւն ան էր ասոր ա-
նոր խօսք հասկըցնողը ...

— Քա իշտէ տիռէթթօը ըլլալու է,
մինծ մաղազային տէրերը քանի չեն խառ-
նուիր ...

— Ես չէի ըսողը, կայնէ նայինք, գառա-
մանըն գօյունը՝ սօղրա չըգար օյունը ...

— Ելլամ մութվախ իշնամ, տղան տա-
լախ տօլմասի ուզեր է աս օր ...

— Տալախ տօլմասի՛ ... քա ատ ծանրը
կերակուրը տայիմիսին միտէն հազմը չընէր,
խելքի՛դ եկաւ ...

— Աման դուն ալ, իշտէ ըսինք եա,
գիտնալըս պաշխա հիւանտութիւն մը ունի
զանէր քի՛ վուճուտմս սաղլամ է ...

— Քա ատ տահա կէշ ըսիր ... ի՞նչ հի-
ւանդութիւն կրնայ ըլլալ ...

— Ծանրմ եապանճինիս չէ՛ եա ... չօդ
չէ՛յ ... սէպէ քի իր տունն է, թող երթայ
ուտէ խըմէ նստի ...

— Հա ամա մինք ասանկ բաղարլըն չը-
քինք, գիտնայի քի ցերեկներն ալ հոս պիտի

ուտէ տէյի նէ, աս սուղութանը չէի հանէր
տէ երկու հարուր ոսկին տար ... խապա՛ր
եա ...

— Աղջըկանս հետ մուհապէթլի՛ ես ա,
դուն անոր նայէ ...

— Ես չէի ըսողը, քիչ օրէն հօտը կելլայ:
ըսելով՝ իր գործին կերթայ, և չիտակ տը-
ղուն մաղազան կառնէ շունչը:

— Բարեւ ձեզ ...

— Ասծու բարին Առաքել աղա, ո՛ւր է
մեր խալֆան չի գար կոր, ճիճի մամայէն չի
կշտացա՛ւ տահա կըսէ ակնոցաւորը, յեգնա-
կան ժպիտով մը:

— Ինչո՛ւ խալֆան ձգեց գնա՞ց քի ...
նայէ մեր Աշոտիկին ալ գործերը սըրային է,
նայող կայ տէյի՛ քիչ մը ըռահաթսըզ է նէ
չիշնար կոր ...

— Համմէ՛ ... նասըլ ձգել երթալ, ա-
տանկ բան մը ընողը առաջուընէ կը դուրցէ
Առաքել աղա, աս չեղաւ ... չէ՛ ... նայէ՛
չորս խաթ քօսթիւմ կայլմըննալիք կը պէք-
լէյէն կոր քի գայ տէ ձեռք առնէ ...

— Էյ ճանրմ ատանկ թուլ մի գտնուիք,
խապար ըրէք թող գայ ...

— Որի՛ հետ խապար ընե՞նք, ըսպասե-
ցինք որ հրամանքդ գաս տէ ըսենք քի պի-
տի գայ նէ գայ, չպիտի գայ նէ ուրիշ մէկը
նայինք ...

— Էյ ես ի՞նչ գիտնամ հէրիֆին տունը որ
ճէհէլլէմն է, փեսաս ալ բան մը չըսաւ ...
դուք հոս մէկը ունիք նէ խրկեցէք, իրիկ-
ուան իմանայ նէ խըռս պիտի ելլայ, սա
նայէ եղա՞ծը ...

— Ինքզինքիդ եկուր Առաքել աղա, ի՞նչ
կըսես կոր, երա՞զ կը տեսնաս կոր. հիմա
ինձի մօտիկ ըրէ, աս իրինկուն երթալուդ
պէս Աշոտին ըսէ քի ...

— Ինձի նայեցէք, քիչ մը թէրպիյէլի
եղէք ... ա՛ ... հիմա մինծերնիդ հոս չէ
տէյի ածականսըզ մածականսըզ Աշոտ տէյի
կը կանչէք կոր, հէրիֆին հացը կուտէք կոր
ամօ՛թ է ... պախուսուս ես ալ սըտեղը
անէրը կը գտնուիմ կոր քի՛ հարը ըսել է ...

— Հիմա ինձի նայէ Առաքել աղա, հաս-
կըցայ խնդիրը, հոգ չէ, ամուսնութեան մէջ
ատանկ տիւպառաներ կըլլան կոր ...: Աս
իրինկուն միւսիւ Աշոտին կերթաս կըսես քի

միւսիւ ֆոնախեանը բարեւ ըրաւ, անպատ-
ճառ գործին գլուխը գայ անցնի, եթէ ոչ
ուրիշ մը պիտի բռնեմ . . .

Առաքել աղա պա՛մ մը անշարժ կը մնայ,
և աչքերը իրենց օղպիթներէն դուրս պոռթ-
կալու աստիճան բանալով՝

— Ըսել է քի . . .

— Հասկցայ խօսք կառնէ միւսիւ ֆոն-
ախեան, նորին հեգնական ժպիտով մը,
քեզի լօլօ են ըրեր, ֆոնախեան ֆիւման
իմա է, քսան տարուան հաստատութիւն մըն
է ասիկայ, և Աշոտը ձեր փեսան ալ իմ
խալֆաս է, շաբաթը ութը մէճիտ կառնէ . . .

— Ըսել է քի Աշոտը՝ . . . ախ քիչ մը
ջուր ինձի, մարեղիք կուգայ կոր վրաս . . .

— Այո՛, Աշոտը իմ խալֆաս է, ֆախաթ
աչքը բաց տղայ է, հէմ ալ շատոնց քովս է
տէյի սէպէքի գործին տէրոջը պէս էր մա-
ղաղային մէջը . . .

— Վախ Առաքել վա՛խ . . . ամա եաղ-
լըն չըլլա՛յ, Ֆոլախեան տէյի հարցուցի՛ նէ
բիւթիւն մէթ ըրին . . .

— Այո՛, մէկ գիրի տարբերութիւն մը
ունինք մէջերնիս Նի և Լի խնդիր, ան
ֆոլախեան է ես ֆոնախեան, որու որ հար-
ցուցեր էք՝ ֆոնախեան հասկնալով գովեր
են, հոգ չէ . . .

— Նասըլ հոգ չէ, ի՛նչ կըսես կոր, եր-
կու հարուր ոսկիս տարաւ քիճը, աս բան մը
չէ, աղջիկս ալ էրուեցաւ . . . վա՛խ Առա-
քել վա՛խ . . .

— Ուրեմն այսպէս, իրեն կըսէք որ, վա-
ղը առաւօտ իրեն գործին գլուխը գտնուի,
ապաթէոջ՝ ուրիշ մը պիտի առնեմ կըսէ
բաթոճնը պարծանօք, մինչ ծնգուընները դո-
ղալով՝ Առաքել աղա փոխանակ շուկայ գոր-
ծին երգալու, ետ կը դառնայ և չիտակ շուն-
չը տուն կառնէ, ուր հաղիւ ներս մտած թէ
չէ՛ կինը դիմաւորելով,

— Վո՛ւյ . . . դող ելայ, ի՛նչ է, ինչո՛ւ
եկար Առաքել աղա, հիւընդցա՛ր, ի՛նչ ե-
ղար . . .

—

— Չաբուխ ըսէ, գիտես քի սընըրը կը-
նիկ մըն եմ, կ'ըսէ Տիկինը, ձեռքերը իրար
բերելով, ի՛նչ եղար . . .

—

— Հէքի՛մ բերենք ի՛նչ ընենք . . . Ի՛ս
իսէ քու երթալէդ ետքը մտմտացի քի,
Աշոտիկին մաղաղան երթայիւր տէ գործերը
քիչ մը սրային դնէիր, թահսիլ ըլլալիք փա-
րայ կար նէ առնէիր, մուխայէթ ըլլալիւր
տէյի, չօճօխին սիրտը կեփի կոր քանի օր է . . .

— Կընիկ լախըտը մը տահա ընելու ըլ-
լա՛մ նէ՛ էնմէ պիտի ինչեցունեմ . . ., զաթը
մեղի եղեր է ըլլալիքը, պարէ նայէ քի իս
խայիպ չընես . . . կ'ըսէ Առաքել աղան սեն-
եակ մտնելով և դուռը գոցելով, մինչ տի-
կինը իրեն կը հետեւէր:

— Ոտքդ պագնեմ Առաքել աղա պա՛ց
ունի աճապ . . .

— Մենք անոր բացը գոցեցինք ամա մեր
տակը բացուեցաւ . . .

— Է՛յ . . .

— Էյլիքտէ օլ, ես հիմա մաղաղայէն
կուգամ կոր . . .

— Պարէ իշխներուն գործը սըրայի դը-
րիւր . . .

— Հա ամա, պաշ իշխն քի շաբաթը
ութը ձերմակ կառնէ եղէր, երկու հարուր
ոսկի թըռախօմալը աղջիկ մը գտեր տուն
փեսայ է գացէր տէ՛ . . . հիմա խանութին
գործը երեսի վրայ մնացեր է, ինքն ալ բա-
շա կուտէ կոր եղեր . . . պաղի ալ տալախ . . .

— Քա ճանրմ, աշխարհքս ի՛նչ պիշիմ
պօշ պէյին մար հարեր կան, հիչ ութը մէ-
ճիտիյէ հաֆթալըս առնողին ծառքը երկու
հարուր ոսկի կուտան տէ տուն փեսայ կառ-
նէն եղէր . . . հայտէ՛, էչէկ են եղէր էչէկ . . .

— Հէմ ալ էչօղլու էչէ՛կ . . ., կընիկ խել-
քըդ դլոխդ բեր, բէք առաջ մերթար ինքի-
զինքիդ եկուր, գէրէ այնան նայելով լա-
խըտը կընես կոր . . .

— Չեմ հասկընար կոր, հէմ դող կելլամ
կոր Առաքել աղա . . .

— Աս տիւպառայով իքիտէն իքի մեր
դուռը առին կընիկ, ատ հաֆթալըսին մեր
կիւլտէն նաղիկ Աշոտիկն է եղէր, էչէկ հար
մարն ալ մենք . . .

— Աման սիրտս . . .

— Դուն կէս խափախ իլիմօնով ինքզին-
քըդ կը գտնաս ամա՛ գործը Առաքելին քէ-
սէն է, երկու հարուր հատ եմ համեր, խա-
զըսի պէս հէրիֆն ալ ճապա . . .

— Աման սընըրներս ... բիւթիւն կը քաշուին կոր ...

— Հիմա ինծի նայէ, ես եղածը ըսեմ տէ ետքէն սիրտդ սընըրներդ թող բռնեն, ինծի մտիկ ըրէ, աս Աշոտ հէրիֆին տիւզճէ խալֆա է եղեր, ութը մէճիտիյէ հաֆթալըխով, ասըլ տէրօջը անունը իլէն ֆիւման՝ ֆունսիս-եան է եղէր, մեր ճանաւարն ալ ֆուլախեան, իշտէ որի քի գացի հարցուցի նէ, ֆունսիս-եանը գիտնալով՝ էլմաս, բուլանթի, զիւմ-բիւթ, եագութ, խուլումճիի խանութ դառ-ցուցին, էյ իրաւ ալ ըռարութալը մաղաղա, շնորհքով մարդ, մեր ֆուլախեանը իր ֆուլ-տախը դարձուց, բարանըրը առաւ, կընիկն ալ առաւ, գլոխն ալ տունը խոթեց, ալթըխ մեր ընելիքը Աւետարանէն պիտի ըլլայ, շէյ-թանի գործին Աստուածնա միսիթարանք, լալ և կըճտել ատամանց ...

— Ախ ... բիւս թըպիսը իս ելաւ, հէլէ շըրըն իշի սէպէպի չըլար նէ ... ես գիտէի ընելիքս ...

— Տեսա՞ր հիմա, մանչ զաւակ մանչ զա-ւակ տէյի ալաղմա չի մնաց գացիր, Աստուած ալ ծանդ լսեց քեզի էրքէք խըլըռճըխ մը տուաւ քի, առջի թոսը մենք կերանք ...

— Էյ հիմա ... կըսէ տիկինը ալլալած ... հիմա ...

— Մինչօք քի ճանչուոր թէրզի մը գըտ-նամ տէ քովը տամ նէ, ըսէ տէ վաղը նըս-տի ձմեռուան բալթօս թէրսը չիտակ դառ-ցունէ ...

ԼԻԼԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԱՅՈՂ՝ ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԹԵՈՂԻԿ

ՔՕՊՈՒԱ

ՆԵՐՇԱՊՈՒՇ

ԵԼ

Համով հոտով

ԼԻԼԱ

Ի Ն Զ Ո Ւ ՈՐ

(ԱՐՁԱԳԱՆԳ)



Եթէ կիները հագնին քանքալօն
Մուկզ չունին որ ձգեն անդ à long :

Կիներ ժաքերնին կը հանեն շաս վեր
Երբոր երկնուն դեռ նոր են զատուեր:

Կիներ շաս բաղձան անձրեւոս օդին
Ձի պըլըխ միսը կը հոսի սօրին :

Տաֆ տուն շաս կերքան կը քսուին առտուն
Ըսել ուզելով՝ « միայն գիս ա՛ն դուն » :

Եթէ ուզածը չբերես յանախ
Նսֆը տունը քեզ կը դառնայ հա՛ նաղ :

Միմակ չի ձգուիր կիներ գեղանի
Կրծուելիք պատառ կըլլայ սեղանի :

Թող մարդուն կիներ կը մընայ անհուն
ՀիլԱին « ՄՈՄԸ ՄԱՐԷ՛ »-ն մոռցա՛ր դուն :

Դուռըդ փակ պահէ, եղիր կասկածոս
Եաթախդ ալ նայէ կա՛յ մի պակսած ոս :

Դուռը բանալնուն քիչ մ՛ուտ՝ մըսածէ
Ուրիւ սը քենէ առաջ մըսա՛ծ է :

Յիր ցան սեմակը աղէկ մը նայէ
Քունցիդ քովերը կարմիր հիւնա՛յ է ...

Ձէ պէ՛, նայեցայ լուսովը լուսին
Վախնամ տասնը հինգ օրէն կը բուսնին :

ԹԷՆՕՈՒ

Ձ Ե Կ Ո Յ Յ

Մեր գաւառացի այն Պատ. բաժանորդ-ներէն՝ որոնց հասցէին բաժնեգնի մասին գը-րեցինք ասկէ առաջ պանսոօններուն վրայ,
կը խնդրենք որպէս զի հաճին մօտ օրէն մեզ
հասցնել իրենց հաշիւները, չստիպելու հա-մար զմեզ դադրեցնել թերթերը :

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՒՏԱՐ. — Տեղւոյս Աղքատախնամ մարմինը, որ գիւտ մը յղացած է մօտալուտ ձմրան առթիւ, այն է՝ պատրաստ ունեցած արժէքաւոր թուղթերը կէս կէս ժամ աղքատ հիւանդներուն տունները պտըտցնել, դեռ չառնուած ածուխին էքօնօմի մը ընելու համար: (Թուղթէ քէօմիւր փորձելու տեղ՝ թուղթը քէօմիւր ընէք աւելի լաւ չըլլա՞ր ... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղացի օրիորդի մը խառախաճնօրօզէն վախը փարատելու համար երեք գիշեր շարունակ եօթնական խառանցիկ չաթլաթմիշ պիտի ընեն սապէս ըսելով «խառանքիլիմ պոլտամա, սէֆա կէլտին օտամա, պուաօ մամին նամին»:

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Գիշերուան շողեխաւային երթեւեկութենէն օգտուող երկու նըշանածներ, Բերա թատրոն երթալէ վերջ՝ անցեալ գիշեր երբ կը վերադառնային, սիրուն տատրակը թանկագին պուօ մը կորսնցուցած է: Կըսուի թէ քամառային մէջ սիրային ճանճիրիճիճճօի մը պահուն՝ բուն իսկ նշանածը աչքբամէնթօ ըրած ըլլայ ...:

ԲԵՐԱ. — Անցեալ իրինկուն ուշ ժամանակ թէք գլխի վարժուհի մը հետապնդող միւսիւն, երբ կը տեսնէ որ օրիորդը կարեւորութիւն չի տալով ճամբան կը շարունակէ, ոտքին չէլմէ մը դնելով՝ վար ձգել ուղածատեն՝ որպէս զի բռնէ, ինքը հաւասարակը ղուլթիւնը կորսնցնելով՝ պօյ է չափեր, վրայ տալով գրպանէն ինկած սրբուած հինգնոցը:

ԹՈՒԱՆՏԱՊՈՒԼ. — Հոստեղի նորակազմելի եռաձայնին անդամներուն համար թաղէ հաւկիթի պէտքը անհրաժեշտ տեսնուելով՝ մասնաւոր մէկուն յանձնուեցաւ գիւղերը պտըտելով բաւական մը ձեռք ձգել մօտ օրէն: (Ուշադրութիւն մինչեւ որ գայ՝ իրար չուտեն ... Ծ. Խ.):

ՄԱԳՐԻ-ԳԻՒԴ. — Շաբաթ օրուան վերջին թռէնին մէջ 8¹/₂ նիւմէո կնկան ձեռ-

նոցի մը թէքը գտնուած է, սիրուիէն կը խնդրուի զայն ստանալ Հանրագիտակի խումբագրատունէն:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, Մայր-եկեղեցի. — Ուէ պաշտօն ու գործ մը չունենալով հանդերձ, լոկ կիներն ու աղջիկները դիտելու համար՝ եկեղեցիին բանկալը բազմող հին թաղական կոշկակար մը տուն դարձին փառաւոր կռիւ մը ըրաւ կնկակը հետ, տղմային տակը առնել տուած ըլլալուն համար: (Գուժ-գարուի դրսէն առած դասդ բաւական չէ՞ր, բարեկամ. Ծ. Խ.):

ՊԱԼԱԹ. — Աստուածամօրը ուխտի գացող փայլիւղչուք տիկին մը իւր 5 ոսկինոց ժամացոյցը վրայ տուաւ, փոխան 5 դրուչնոց մօմի: (Խելքը տեղն է եւ՝ ... Ծ. Խ.):

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

Չորս տառով ես եմ մի մարդ,
Զգուանք կազդէ բառն ինձ կիճ,
Ինչպէ՞ս կ'ըլլայ, գեթ արդ,
Երբ տառերես անմեկին
Մի՞ն նախագրեմ ամենքին
Կըլլամ ան որ զգուիմ ցարդ:

L

Մինչեւ տասն և հինգ օր ճիշդ լուծողը վիճակաւ կստանայ՝ երկու հատոր սիրուն վէպ, հայերէն լեզուաւ:

Արսօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՌԻՐԵԱՆ

Պապր-Ալի հասեդի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐԹՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Օգոստոս 10-ի գիշերը Տէր և Տիկին Կրօզօնի հիւրերը միացած էին զղեակին այն սքանչելի սենեակը որ կը բարձրանայ Սօմի ծովուն գոգը: Կոմսուհին զաշնակ զարկաւ և իր գոհարեղէնները, նուագին մօտը՝ կարասիի մը վրայ դրաւ, այս գոհարեղէններուն մէջ կը գտնուէր նաեւ պարոն Տ'Օթուաին մատանին:

Ժամէ մը ետքը, կոմսը սենեակը քաշուեցաւ, նոյնպէս և իր երկու հօրեղբորորդիները՝ Անտէլէնք և Տիկին Րէալ Կրօզօնի՝ կոմսուհին մէկ շատ մօտերիմ բարեկամուհին: Եւ այս վերջինը մինակ մնաց Աւստրիացի հիւպատոս Պ. Պլէյշէնի և անոր կնոջ հետ:

Խօսակցեցան, յետոյ կոմսուհին սրահին լամբարը մարեց, մինչ Պ. Պլէյշէն ալ զաշնակին վրայ գտնուող երկու լամբարները կը մարեր: Վայրկեան մը մութ տիւրեց, քիչ մը չփոթութիւն, և յետոյ հիւպատոսը աշտանակ մը վառեց եւ երեքը մէկ իրենց յարկաբաժինները ելան: Բայց հազիւ իրենց տեղերէն ելած, կոմսուհին յիշեց գոհարեղէնները և իր սպասուհին զրկեց փնտռելու. սպասուհին վերադարձաւ, բերաւ ու վառարանին (սըմիսին) վրայ տեղադրեց:

Հետեւեալ օրը, Տիկին Կրօզօն կատուգէր որ մատանի մը կը պակսէր, կապոյտ քարով մատանին, և իր ամուսնոյն իմացուց: Իրենց եղբակացութիւնը անմիջական եղաւ. սպասուհին կասկածէ վեր ըլլալով, յանցաւորը Պ. Պլէյշէնը ըլլալու էր:

Կոմսը, Ամբէնի գլխաւոր ոստիկանապետը բերել տուաւ որ քննութիւն մը բացաւ և զաղանաբար հսկողութիւն մը ի գործ դրաւ Աւստրիացի հիւպատոսին վրայ որպէս զի ոչ կարենայ ծախել և ոչ առաքել մատանին:

Դիշեր և ցորեկ ոստիկանները զղեակը չըջապատեցին:

Երկու շաբաթներ սահեցաւ առանց ամուսնափոխութեան:

Նախորդ միջադէպի մը: Պ. Պլէյշէն իր մեկնումը յայտնեց: Այդ օրը իրեն դէմ բողոքեցին: Ոստիկանապետը պաշտօնապէս միջամտեց և հրամայեց ծրարները քննել: Փոքրիկ անտուկի մը մէջ, որուն բանալին միշտ հիւպատոսին քովն էր, չիշ մը աճառի փոշի գտան, և այդ չիշին մէջէն ալ մատանին:

Տիկին Պլէյշէն մարեցաւ: Իր ամուսինը ձեռքակալութեան վիճակի մէջ դրուեցաւ:

Կը յիշուի այն պաշտպանողականը որ յանցաւորը ըրաւ: Չէր կրնար բացատրել մատանիին ներկայութիւնը՝ եթէ ոչ Պ. Կրօզօնի վրէժխնդրութեանը: «Կոմսը վայրագ է և իր կինը դժբաղդ կրնէ: Կնոջը հետ մէկ տեսակցութեանս, յայտարարեցի որ ամուսնալուծում ընէ. կոմսը իմացաւ և վրէժը առաւ»:

Չանձրացած այն ամէն տարաձայնութիւններէն որոնք անզօր ապացոյց մը երեւան չի բերին արդարացնելու իրենց ամբաստանութիւնը, Տէր և Տիկին Կրօզօն ուղեցին որ Բարիդէն իրենց ոստիկան մը զրկուի որ կարող ըլլար քակելու կաթին (չիլէ) թելերը: Կանխմարտը զրկեցին: Կանխմարտ հասաւ և քննութեան ձեռնարկեց, անգիտանալով ինչ որ եղած ու լսուած էր այդ մասին:

Դրեթէ ծառաները չխառնեց գործին մէջը բայց հիւրերը իրեն կասկած ներշնչեցին և տեղեկացաւ անոնց ապրելու եղանակին և անոնց բարոյականին:

Ո՞վ էր այդ Պարոն Անտէլէնքը և Բիւշու զղեակէն մեկներ էին, և Տիկին Րէալ:

Վերջապէս, կոմսը, համբերութիւնը հատած պոռաց:

— Տիկին Րէալ կնոջ մէկ բարեկամուհին է, ահա իր հասցէն, Օթէլ տը Րիվ տ'օր, Մօնթէ Գարլօի մէջ: Գալով իմ հօրեղբորորդիներու՝ Անտէլէնց, անոնք աշխարհիս ա-

մէնէն պատուաւոր մարդիկներէն են, և հիմակ խօսինք Պ. Պլէյշէնի վրայ:

Կանխմարտ դէմ դնելուն՝ կոմսը կռնակը դարձուց:

Չորս օրուան տեւողութեան մէջ քննիչը վնասուեց, պարտէզը պտտեցաւ, սպասուհիին հետ շատախօսեց, պարտիզպանները, մօտը գտնուող նամակատան պաշտօնեաները, ինքնաշարժին մեքենավարը հարցաքննեց, այցելեց այն յարկաբաժինները որ Պլէյշէն ընտանիքը, Տանտէլէնք և Տիկին Բէալ կը բնակէին, յետոյ, առաւօտ մը իր հիւրընկալներէն մեկնելու պատրաստուեցաւ և սապէս խօսեցաւ:

— Վերջին խօսքս չեմ կրնար ըսել, վասն զի, հիմէն բան մը չեմ գիտեր, ասոր մէջ անհասկանալի կէտեր կան, բայց մեծ կարեւորութիւն ունեցող նշաններ գտայ որ կը պարտաւորեն զիս նոր հետքի մը: Տակաւին շարժմէ մը պէտք պիտի ըլլայ:

— Թող ըլլայ, յարեց կոմսը, եկող ուրախութիւնները կը դառնանք: Շարժմէ, ձեզի կոպակներ:

* * *

Ուրբաթ իրենց գալուն, Տէր և Տիկին Կրօզովն սա հեռագիրը գտան՝ Պօրտոյէն ուղղուած:

« Կը խնդրուի որ վաղը ժամը տասնութիւն ժամը ուսիկանակաւ պատշաճութեամբ գաք:

ԿԱՆԻՄԱՐՏ »:

Ճիշդ ժամը տասնութիւն, իրենց ինքնաշարժ կառքը կը կենար Օրֆէվրի քարափը, և անմիջապէս Կանխմարտ զանոնք առաջնորդեց Ապահովութեան պետին սենեակը:

— Էհ, Կանխմարտ, պոռայ Պ. Տիւտուի, երբ նստեցուց զանոնք, ինչ հետաքրքրական բան կայ մեզի ըսելիք, քեզ մտիկ կընենք:

Կանխմարտ վարանեցաւ, յետոյ արտասանեց:

— Փափաքեցայ որ այս տեսակցութիւնը հոս տեղի ունենար, ինչու որ եզրակացութիւններ կը բերեմ կամ աւելին կարծիք մը...

— Որոշ խօսէ, ապացոյցներ կը բերես մեզի:

— Ոչ:

— Այն ատեն:

— Այն ատեն, կը հաստատեմ որ Պ. Պլէյշէն բան մը չունի մատուցելու գողութեան մէջ:

— Օհ, օհ, ըսաւ Պ. Տիւտուի, հաստատութիւնը քիչ մը ծանր է: Կոմսը յարեց:

— Եւ ոչ մէկը մեզի չափ չպիտի բաղձար Պ. Պլէյշէնի անմեղութեանը, բայց այս անմեղութիւնը պէտք չէ որ ճիշդ ապացոյցներու վրայ հաստատուի:

— Աւելին, պատասխանեց ոստիկանը, իր յանցապարտութիւնը պէտք է հաստատուի: Արդ, իմ քննութիւնէս կը հետեւի որ Պ. Պլէյշէնի դէմ կատարուած այն հսկողութիւնները — իբր թէ գաղտնի կերպով կատարուած — շատ անճարակ եղան, ուստի ընդունելի է որ մարդ մը, բացայայտ ամբաստանութեան մը հարուածին տակ, խուզարկումէ մը առաջ գլխէն չնետէ այն առարկան որ գողցած է:

— Ինչպէ՞ս պիտի կրնար ընել, քանի որ լրտեսուած էր:

— Միշտ կարելի է, գիշերը, պատուհանը կը բանան և մատին սենեակէն երեսուն մէթը հեռուն կը նստեն:

Լուրթենէ մը ետքը կոմսը հարցուց:

— Այս ձեր յայտնութեան մէջ են որ կամփոփուին ձեր ջանքերը:

— Ո՛չ պարոն, գողութեան հետեւեալ օրը, ինքնաշարժ կառք մը ձեր երեք հիւրերը մինչեւ Կրէնի գիւղաքաղաքը տարած էր: Մինչդեռ այս անձերէն երկուքը որոնք Մարտի դաշտը այցելութեան կերթային, երրորդը ածապարանքով նամակատուն կ'երթար և կառաքէր պզտիկ կնքամոմուած տուփ մը:

Պ. Կրօզովն յարեց:

— Հոգ բնականէն զատ բան մը չկայ:

— Թերեւս ձեզի նուազ բնական պիտի երևի քան այդ անձին, փոխանակ իր բուն անունը տալու, առաքումը Բուսսօ անունին ըրած է, և թէ ընդունողը, Բարիլի մէջ լքուած անուն մէկը, նոյն իրիկունը որ մատանին պարունակող տուփը ստացած է, ուրիշ տեղ փոխադրուած է:

— Թերեւս, հարցուց կոմսը, խնդիրը հօրեղբորորդիներու Անտէլենց վրայ է:

— Այդ պարոններուն վրայ չէ խնդիրը:

— Ուրեմն Տիկին Բէալին:

— Այո՛:

(Շարունակելի):

ՄԵԾ Գ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅՐԱՅԵԼՈՒԹՅԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թոփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը չափած է բոլոր իրեն
գինով յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ գինացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50 — 7



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ խանին
օսկ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն գոյաւար հաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ԿՈՒՉԷՔ ԱՍՏԻՆԱԼ ՉԵՐ ՈՒՉԱՄԷ ԳՈՒՏՈՒՄ ԿԱՐՈՒՄ ՈՒ ԱՆԱՍԱԼ

ՕՒԷՐՈՒԿ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

Երեւան 1902 թ. Գործարարական

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐԵԱԿ ՊԵՏԵՐ ՈՒՆԵՆԱԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԳԱՄԱԳՐՔԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ՎԱԼԵՐԱՅՈՒԱԾ
ԸՍՏԱՆ ՊԱՏ. ՈՒՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԷՆ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ԸՍՏԱՆ
ՎԼԱՅԵԱՆ, ԿԱՐԷԼԵՍ ՈՒ ՓՈՐՁԱՆՈՒ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ՉԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԻՔԵՐՈՒ՝
ՈՐՈՖ ԳՆՈՒ ԿՈՒՄ ԸՍՏԱՆ ՈՒ ՏԵՍԱԿՈՎ ԽԱՎՈՅՆ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ շԱՍԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻՔԵՐՈՒ՝ ԲՈՒՄ, ԳՐԻՅ, ԱՆԵՍԱՆ,
ԿԱՊԱՄԱՐ, ՄԱՏԻՍ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԻՅ, ԲԱՐԵՍԱՅԱԿ,
ԿԱԽԻՆ, ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՆԱԿԱՆ ՆԵՐԷՆ ԵՆ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷՐ Ե ԳՈՐԾ՝ ՍԸ. ՎԼԱՅԵԱՆ, ՎԼԱՅԵԱՆ, ԲԱ-
ՐԵՆԻԵ, ԿԱՍՈՒԱՆԻԵ, ԱՅԿԱՄԱՐ, ԵՐԱՐԵՆԻԱՆ, ՄԱՆԿԱՎՈՐԻՍ
ԿԱՊԱՄԱՐ ԵՆ: Ինչ որ ալ ըլլայ սակայն ձեր պէտք, հասկցէ
անգամ մը ՅՈՒՂԱՆ ԵՆԵՍ ԵՎԻԵՆԱՆ ԳՐԱՍԱՆ
ՎԱՍԱՆ ԸՍՏԱՆ ԵՎ ԽԱՐՈՒԾ ԿԱՅԻՐ ԸՍՏԱՆ, ԲԱՆԻ ՈՐ ԵՐԱՅԵԱՆ
ԱՌՔԻՆ ԱՄԷՆ ԵՆԴԻՆԱԿԱՆԵՐՈՒ ԴԱՍԱԳՐԵՆԷՆ ԵՐ ՈՒ ԲՈՒՄ ԱՐԵՐ
ՄԵՐ ԱՆԵՐՈՒԱԾ Ե՝ ԱՐԴԷՆ՝ ԵՂԱԾ ՏԵՍԱԿԱՆԵՐՈՒՄ ՎԵՂ. ԻՆՉԿԱՆ ԵՂԱԾ
ՁԵՐԱԳՐԻՍ ԵՂԱԾ ԿԱՅԻՐԱՅԵՆԻ ՈՒ ՏՊՈՑ ԵՂԱԾ ԵՂԱԾ ԵՂԱԾ ԵՂԱԾ:

Հարգուեցէ՛ք ու անմեղապէս ԵՂԱԾ ԿԱՍԱՆԻԱՆԻ
ԱՅԿԱՐԵՆԷՐ՝ ու ԿԱՅԻՐ ԱՍԿԱՆՔ ՕՐԻՍ

ԼԱԻԱՍ ԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻԱՍ ԳՈՅՆ ԶԵՂ ԶՈՎ՝

ԿԱ ՆԵՐԻՅ ԳՈՐԾԱՆՈՒԹԻՒՆ

ԴԻՄԵՑԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՄԱՆԵԱՆ ԽԱՆ ՕՂԱՆՆԻՍ ԵՍԿԻՆԵՆ ԳՐԱՍԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ե ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
[5000] Ա.Ի.Ե.Լ.Ի ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ չղթայներ, աստնցմէ վաստիւ մէկն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զլիւարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագոյնի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆոն, ինչպէս նաեւ կարի (Ճօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքայ տակունս թիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղլ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՐՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—46

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԳԻՇԵՐԹԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Կ. Պալիս, Գասք-գիւղ, Մէօհիւրսար
հասցէսի:

Յրդ Տարեօրջան

Մասնագէտ ուսուցիչներու և դասուցչուհիներու ձեռամբ, աստմային ուսումնիրէ և գիտական քանդակեղտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սկումարժութեամբ (բռարիֆ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կարու Զեւ, Ասեղնագործութեան զանազան անուանիքը (ձեւքով և մեքենայով), ձախնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զուլթակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթիւրի խնամք, առողջ պտնիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար զիմիկ ի վարժարանս առ Տեսուչն կամ առ Տեսուչին: Մասնաւորապէս անգլիկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. եւ. Շք. օրերը ժամը 5 և 9 զիմիւր ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտութեանց վերաբառեալ անգլի պիտի տննեայ Մեղս. 3, Բշ. օր:

Հիմնադիր-ՏԵՐԵԿ

Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ